

«Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի 2018 թվականի հաշվետվություն»

2018 թվականի սեպտեմբերի 18-ի նիստում հոգեբան Անժելա Բարխուդարյանը խոսել է մարզաձևերի « ազգային հավաքականներում ընդգրկված, ինչպես նաև հեռանկարային մարզիկների հոգեբանական ապահովման և նրանց հետ տարվող աշխատանքների մոնիտորինգի ունիվերսալ համակարգի ձևավորման անհրաժեշտության մասին՝ ներկայացնելով Հայաստանի բոնցքամարտի մեծահասակների և երիտասարդների հավաքականների անդամների հետ իրականացրած իր աշխատանքները:

Ելույթ են ունեցել «Սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Լևոն Վահրադյանը, «Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Գաբրիել Ղազարյանը, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Լալայանի անվան մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Հարություն Բաբայանը:

Որոշվել է մշակել համապատասխան իրավական փաստաթուղթ, որը կներկայացվի «Կառավարության հաստատմանը՝ մարզաձևերի հավաքական թիմերի հետ պիլոտային ծրագիր իրականացնելու համար:

Նույն նիստում մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Էռնեստ Ավանեսովը ներկաների ուշադրությունն է հրավիրել Հայաստանի Հանրապետությունում մանկապատանեկան մարզադպրոցների ծրագրա-նորմատիվային փաստաթղթերի թերի վիճակի վրա և առաջարկել ստեղծել միասնական փաստաթուղթ, ինչը կբարձրացնի մարզադպրոցների ուսումնա-մարզական գործընթացի արդյունավետությունը:

Ելույթ են ունեցել «Սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Լևոն Վահրադյանը, «Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Գաբրիել Ղազարյանը, Հայաստանի ազգային սկաուտական շարժման ներկայացուցիչ Մհեր Պոյաճեանը, Գյումրու երիտասարդական պալատի տնօրեն Լիլիթ Մակարյանը:

Որոշվել է առնելով այն հանգամանքը, որ խնդրի կարգավորման նպատակով Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից արդեն իսկ աշխատանքներ են տարվում, խորհրդի հաջորդ նիստին ներկայացնել կատարված աշխատանքների արդյունքները:

Էռնեստ Ավանեսովը ներկայացրել է նաև «Հանրակրթական դպրոցների և մարզակառույցներ ունեցող այլ հաստատությունների համագործակցության հարցը՝ նշելով, որ այն խթան կդառնա դպրոցահասակ երեխաների համար՝ զբաղվելու ֆիզիկական կուլտուրայով և սպորտով, ինչպես նաև արդյունավետ օգտագործելու մազաբազանների հնարավորությունները:

Ելույթ են ունեցել «Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Գաբրիել Ղազարյանը, ««Լույսի աշխարհ» մանկապատանեկան, երիտասարդական կենտրոն»

հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ Մեսրոպ Գալստյանը և Լուսինե Պետրոսյանը, «Սյունիքի մարզի աթլետիկայի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության նախագահ Արշամ Սարգսյանը, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Լալայանի անվան մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Հարություն Բաբայանը:

Որոշվել է հարցը քննարկել՝ ներգրավելով նաև հանրակրթական դպրոցների վերադաս գերատեսչությունների ներկայացուցիչներին:

Էռնեստ Ավանեսովի հաջորդ հարցը վերաբերել է ազգային շարժախաղերի փառատոնի կազմակերպման անհրաժեշտությանը:

Ելույթ են ունեցել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Գաբրիել Ղազարյանը, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Լալայանի անվան մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Հարություն Բաբայանը, հոգեբան Անժելա Բարխուդարյանը, Գյումրու երիտասարդական պալատի տնօրեն Լիլիթ Մակարյանը:

Որոշվել է Գյումրում փորձնական անցկացնել ազգային շարժախաղերի փառատոն՝ հետագայում այն կազմակերպել նաև մյուս մարզերում կամ Երևան քաղաքում:

Սեպտեմբերի 18-ի նիստի օրակարգի 5-րդ հարցը ներկայացրել է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Լալայանի անվան մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Հարություն Բաբայանը: Հարցը վերաբերել է գիտամեթոդական գրականության հրատարակման հանրապետական խորհրդի ստեղծման անհրաժեշտությանը: Ըստ զեկուցողի՝ գիտամեթոդական գրականության հրատարակման հանրապետական խորհուրդը զբաղվելու է զանգվածային, առողջարարական ֆիզիկական դաստիարակության և մարզական պարապմունքների կազմակերպման գիտամեթոդական գրականության հրատարակմամբ, տարբեր մարզաձևերի սպորտային կատարելագործման և սպասարկման գիտամեթոդական, մասնագիտական գրականության հրատարակմամբ, ինչպես նաև տարբեր մարզաձևերի հավաքական թիմերի համալիր սպասարկման գիտական խմբերի ստեղծմամբ:

Ելույթ են ունեցել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Գաբրիել Ղազարյանը, հոգեբան Անժելա Բարխուդարյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու Էռնեստ Անավեսովը, ««Լույսի աշխարհ» մանկապատանեկան, երիտասարդական կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ Մեսրոպ Գալստյանը:

Որոշվել է հարցը քննարկել առանձին մասնագետների և փորձագետների հետ:

2018 թվականի դեկտեմբերի 18-ի նիստում Հոգեբան Անժելա Բարխուդարյանը խոսել է մարզաձևերի ազգային հավաքական թիմերի ընդհանուր սպորտային պատրաստության

գործընթացում ընդգրկված մարզիչների, բժիշկների, մերսոլների և մյուս մասնագետների համար հոգեբանական գործնական սեմինարի կազմակերպման անհրաժեշտության մասին:

Ելույթ են ունեցել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի պաշտոնակատար Գաբրիել Ղազարյանը, «Ջավախքին աջակցություն» հիմնադրամի ներկայացուցիչ Սամվել Մկոյանը:

Որոշվել է մշակել և ներկայացնել սեմինարին հաջորդող միջոցառումների ցանկ և գործողությունների հստակ ծրագիր:

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Էռնեստ Ավանեսովը ներկաների ուշադրությունն է հրավիրել հանրակրթական դպրոցների աշակերտների համար անցկացվող մարզական միջոցառումների համայնքային փուլերը նույնպես բարձր մակարդակով կազմակերպելու և անցկացնելու կարևորության վրա:

Ելույթ են ունեցել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի պաշտոնակատար Գաբրիել Ղազարյանը, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի ներկայացուցիչ Յուրի Ալեքսանյանը:

Որոշվել է Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների աշակերտների համար անցկացվող «Սպորտլանդիա» և «Սպարտակիադա» մարզական միջոցառումների համայնքային փուլերին մասնակից դարձնել նաև նախարարին կից հասարակական խորհրդի անդամներին:

Էռնեստ Ավանեսովը ներկայացրել է նաև դպրոցականների ֆիզիկական դաստիարակության նոր՝ այլընտրանքային, սպորտայնացման տեխնոլոգիայով դասերի իրականացման մասին իր դիտարկումները:

Ելույթ են ունեցել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի պաշտոնակատար Գաբրիել Ղազարյանը, «Սյունիքի մարզի աթլետիկայի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության նախագահ Արշամ Սարգսյանը, հոգեբան Անժելա Բարխուդարյանը:

Որոշվել է նախ անցկացնել մասնագիտական և փորձագիտական ուսումնասիրություններ, այնուհետև արդյունքները ներկայացնել հանրային քննարկման: